ամին։ Ոմն եղեալ մէյմար աղայ, զգեցեալ զշապիկ, և ի գլուխն եդեալ թղթէ քիւլահ, և ի նմա ճրագ, և նստեալ ի ձի այլանդակ դիմօք՝ երկայն և սպիտակ մորուօք. և առաջի նորա բազմութիւն քէչէլիլէրից, շրջեալ ընդ փողոցս և եկեալ առաջի խանութից, չափէին զղալտըրըմսն, և ասէին. թէ ընդդէմ ֆէրմանի թագաւորին, կէս կանգուն աւելի դուրս է ելեր։ Եւ հրամայէր մէյմար աղան քակել զղալտըրըմսն. և տիրոջ դալտըրըմին զարհուրեալ, փութով տայր նոցա զմի փարայ, և ազատէր ի ձեռաց նոցա։ Այս թէ ոչ քակէին զղալտըրըմսն, զորս յետոյ տէրն ոչ կարէր տալ յարդարել զայն 5 կամ 20 փարայով, որպէս զղալտըրըմսն դերձակի միոջ քակեցին և հանին զմեծամեծ քարինսն, և ի բաց ձգեցին և գնացին ի ճանապարհս իւրեանց։ Եղեն ոմանք աճէմ էլչիսի իւր թախտրմովն։ Ոմանք կուռճի էլչիսի, ոմանք պօստանճի պաշը. զորոց զարարսն եթէ մի ըստ միոջէ զրեցից, ոչ բաւէ երկու տապաղայ և ոչ ժամանակ։ Շինեցին ի բարձր օիւխէ հարսունս տաճկաց յօրինեալս՝ վայելուչս և պաճուճեալս. և խաղացուցանէին ի ճանապարհի տաւուլ զուռնայով։ Նոյնպէս և ոմանք մտեալ ի կերպարանս հարսի և փեսայի՝ հրէից, յունաց և տաճկաց, շրջէին տաւուլ զուռնայով. և խաղային և ժողովէին զդրամս։ Եւ երթային ի դրունս մեծամեծաց, և առնուին պարգևս, և գնային ևս ի դրունս հայոց պատրիարգին, յորս մի ոմն երիցանց տեսեալ զփեսայն և զհարսն հայոց, ասէ. մի՞թէ յաւուրս մեծ պահոց լինի՞ն հարսանիք. և այլ ոմն երէց ձայնէ զմիս երէցն և ասէ. եկ և կարդա՛ ի վերայ սոցա զգալոց աւետարանն։ Թէ ի տունջեան և թէ ի գիշերի, անդադար, յամենայն ճանապարհս լսիւր տաւուլ զուռնայ։ Աստ չէնկի խաղայր. անդ հարսնիք։ Եւ մինչ չև էր վերջացեալ մինն, միւսն գայր ի վայր։ Ցամենայն կողմանց՝ հահա՝ հիհի։ Եւ ի ճանապարհի ընդ ամենայն տեղիս՝ լոյս. և ոչ կարօտէր ոք ֆէնէրի։ Մանկունք և պատանիք մտեալ ի կերպարանս աղջկանց. և երիտասարդք մտեալ ի կերպարանս կանանց, տաւուլ զուռնայով խաղային չէնկիի պէս ի ճանապարհս, և ի խօնախս, այսինքն ի դրունս աղայից։ Ոմանք ոչ գիտելով զայլ ինչ խաղս, և անճարակ յամենայնէ, մտին ի կերպարանս զրոզօփից այսինքն այլանդակ սևադէմ, և իբր ըստ կերպի սատանայի, շրջէին ի ճանապարհի, կանչելով. զրոզօ՛փ, զրոզօփ. զրոզօ՛փ զրոզօ՛փ։ Եւ ոմանք ի նոցանէ ի մի ձեռս իւրեանց՝ ունէին հաուօզ՝ լցեալ դահենով. և միւս ձեռամբ առեալ զտահինն՝ նետէին ի վերայ մարդոյ՝ եթէ ոչ տայր զմի փարայ։ Գրեթէ ոչ ոք կարէր անցանել ընդ չարշրն, և ընդ ճանապարհս ինչ. վասն զի եթէ ոք անցանէր ընդ այն՝ մի ոմն կանչէր. օ՛ օ՛։ Եւ զոյգ ընդ նմին մի ըստ միոջէ՝ աղաղակէին օ՛ օ՛։ օ՛ օ՛։ Մինչև մեծամեծաց իսկ, որք ծպտեալ անցանէին, նոցա ևս ասէին, թէպէտ յետոյ արգելաւ։ Քիւրքճիք չինեցին ի քիւրքէ զգայլս, և յանկարծակի արձակէին ի վերայ անցանողաց, և զարհուրեցուցանէին. թէպէտ և այն յետոյ արգելաւ։

Զկնի եօթն աւուրց տօնանմային, արարին էսնաֆ ալայը. յորս ճէվահիրճիքն ալայը՝ գերազանցեաց քան զամենայն. քանզի արարին զմի դրօշակ մեծ սոսկ ի մարգարտաց. և զմի դրօշակ սոսկ ի մէրճանից. զմի դրօշակ ևս զարդարեալ՝ ոսկի և ճէվահիր գոտեօք և այլ իրօք։ Արարին և զմի թահտրուանն զարդարեալ ի ոսկի և ճէվահիր գոտեաց, դանակաց, ժամացուցից, և այլ այնպիսեաց։ Ոմանք մտեալ ի կերպարանս պօստանճիի, ոմանք զգեցեալ զփառաւոր զգեստս. և ի ձեռս ամենեցուն, կամ կիւլէպտան և կամ պուհուրտան. մինչեւ անուշահոտութիւնն բուրեալ ի քաղաքն։ Իսկ վարդապետքն ոչ զգեցան զփառաւոր զգեստս, այլ իւրեանց եասախի զգեստովն, զի մի խոցեսցեն զաչսն։ Եւ յորժամ սկսան յոնաֆ ալայը, և այլ մեծամեծք խաղքն, յայնմհետէ ոչ ոք հայէր յերեսս զրոզօփիցն։ Ցայնժամ մի ոմն ի զրոզօփիցն ելեալ ի բարձրագոյն տեղի ինչ ի չարշրն, աղաղակեաց և ասէ. զրոզօփ ալան՝ զրոզօփ. ուճուզ ուճուզ։ Կանայք ամենևին ոչ կարէին ելանել արտաքս, զի սաստիկ եասաղ էր. և ոչ ոք ի գիշերի կարէր նաւակաւ գնալ ուրեք։ Եւ զարմանք մի մեծ այս էր. զի յաւուրսն յայնոսիկ՝ ոչ ուրուք քիթն արունեցաւ։ Եւ ի սաստիկ դիզանալ ժողովրդեանն և ի կուտիլն, ոչ ուրուք իր ինչ պակասեցաւ. և ոչ գոյր եանքէսիճի։ Եւ վերջապէս, դիր յայտնի գինչս քո, և մի երկնչիր։ Թէ հայ, թէ յոյն և թէ հրէայ, համարձակ շրջէին։ Պարտապանքն իսկ որք ոչ արտաքս ելանէին ի